



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍ
ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Ա. ՎՐԱՑԵԱՆ

Ե. ՏՈՒԹԻ, ԹԻՒ 3

1937

ՅՈՒԼԻՍ - ՀՅԱՏԵՄԲԵՐ

ՈՒԽԲԵՆ ԲԵՐԲԵՐԵԱՆ

ՊԱՏՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԻՑ

I

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏՐԱՆՔՈՒԹԻՒՆ

Երբ ճանապարհորդը մօտենում է լեռան բարձունքներին, մի պահ կանգ է առնում ու զլուխը յետ զարձնելով՝ հայեցք է ձգում անցած երկար ճամփուն վրա եւ մի ակնթարթում ընդգրկում է ամբողջ տարածութիւնը, եւ գեռ հեռում մնացած հորիզոնները։ Այդպէս եւ ամէն մէկը մեղնից երկար ու ձիգ տարիներ գիտակցական կեանքով ապրելուց յետոյ՝ մօտենալով կեանքի վերջին հանդրւանին՝ ուղրում է ընդգրկել հեռու անցեալի ապրած ու զնացած օրերն ու դէպքերը, աշխատում է բացատրել, գէթ իր խղճի համար, նրանց էութիւնը եւ մի պահ, յիշողութեան մէջ, կենդանացնել եւ վերապրել կեանքի երկար եւ անվերադարձ ուղին։

Ինչպէս լուսանկարչի գործիքին ենթարկւած առարկան արտայալութ է յատակ ապակիի վրա անչնչելի գծեր, նոյնպէս եւ մեր մանկական – երիտասարդական տարիների տպաւորութիւնները ընդմիշտ եւ ուռուցիկ կերպով մնում են մեր յիշողութեան մութ անկիւնում պահւած, յաճախ, աւելի պարզ, աւելի յստակ, քան թէ ծերութեան օրերում ստացւած տպաւորութիւնները։ մարդկային կազմւածքի բը-

699

542-2001



նական օրէնքներից մէկն է դա: Ահա թէ ինչու կեանքի առաջին շըր-
ջանի այս կամ այն փոքրիկ դէպքը, դրւագը ընդ միշտ մնում է տպա-
ւորւած յատակ ու ամրացած, ասես զեռ երէկ պատահած լինէր: Հե-
ռու յիշողութիւնների մեծ արկղի մէջ ընկղմւած՝ այդ ապրումները
թւում են մերթ շատ լայն, մերթ խիստ նեղ: մերթ բաց են անում
լայն հորիզոններ, մերթ սեղմւում են մինչեւ ձանձի թոփչքի նեղ տա-
րածութիւն: Եւ ուրիշ բան. մեր մանկական – երիտասարդական անց-
եալը հետագայ երկար տարիների ընթացքում անվերջ հեռանում ու
յարատեւ վերադառնում է եւ այսպէսով ապրում է յարատեւ:

Որքան էլ այսօրւայ ըմբոնումներիս տեսակէտից, բազում դէպ-
քերում, իմ ունեցած անցեալի ապրումները, գործելու մղումները,
որդեպրած հասկացողութիւնները զերծ չլինեն մեծ ու փոքր պատ-
րանքներից, բայց եւ այնպէս ես նրանց յիշում եմ համբերատարու-
թեամբ եւ անաչառորէն. մարդկային յառաջդիմութիւնը չի կարող
զարգանալ, եթէ նրա մեկնման կէտը չլինի անցեալի անաչառ եւ համ-
բերատար ուսումնասիրութիւնը, յաճախ եւ յարգանքը. մանաւանդ
երբ այդ սիալները հիմնւած են եղել անշահախնդիր ու անվերապահ
յափշտակութեան վրա՝ դրդւած վսեմ դաղափարներից ու զգաց-
մունքներից:

Իմ ծննդավայրը, Նոր – Նախիջեւան, հիմնւած Հարաւային Ռու-
սաստանի Դոն գետի վրա, հաղիւ հարիւր տարւայ գոյութիւն ունէր: Հեռու
հոծ հայութիւնից եւ այն մեծ երկրից, որ Հայաստան էր կոչ-
ւում, Նոր – Նախիջեւանը իր հինդ հայախօս դիւղերով մի տեսակ
կղղիացած վայր էր, որ պատմական դէպքերի անհասանելի դիպւա-
ծով՝ եկել – ընկել էր Ռուսաստանի անծայրածիր հարուստ տափաս-
տանների մէջ, շրջապատւած, կլանւելու չափ, ուռւի հարուստ մշա-
կոյթով ու կենցաղով:

Արդէն տասնեակ տարիներ կար, որ Նոր – Նախիջեւանի գիտա-
կից զանգւածը, առանց ընդզծած պայքարի, առանց աղմուկի, աշ-
խատում էր պահպանել իր, այն ժամանակւայ համար, ազգային հա-
րուստ մշակոյթը, չայլասերւել, չկորցնել սեփական դէմքը շրջապա-
տի օտար ազգեցութեան տակ. պահել տոհմային աւանդութիւններ-
ը, կրօնը, բարքերն ու սովորութիւնները: Բայց նա ուզում էր պահ-
պանել եւ մի ուրիշ բան, որը, նրա կարծիքով, գերակշիռ դեր էր
խաղալու ազգապահպանման մէջ եւ որը, սակայն, ինքն էլ յատակօրէն
չէր տեսնում իր չուրջը կայուն ու ամրացած. դա մայրենի լեզուն էր:
կեանքի ուրոյն – ուրոյն բերումներով: Նոր – Նախիջեւանի ժողովը-
գական, առօրեայ լեզուն մի խառնուրդ էր շատ գաւառաբարբառնե-

րի՝ Ղըմիկ, Աստղախանի, Շիրակի, Կարինի, Պոլսի հին հայերէնի. այդ ամենը համեմած էր թիւրքերէն, թաթարերէն և ռուսերէն բառերով եւ, ի վերջոյ, գրաբար զանազան դարձածքներով: Խառն էր եւ լեզւի հնչիւնաբանութիւնը՝ մեծ մասով հին Պոլսի արտասահնութիւն, տեղ – տեղ արեւելահայ. «Եղբայրը» եւ «Համբոյրը» արտասահնելու «ի» էր լուսում, իսկ «բան»-ը արտասահնութ էր «Յ»-ով, «Ճուրը» արեւելահայերի պէս: Ահա մի նախադասութիւն առօրեայ խօսակցութիւնից. «Աղ Թառասն ալ (Թոռոսը) գլխուս փրեամօ (ուղղակի) պելա էղիլ է. մլով բանիւ ստակս կուլ կուլէ տալ. ան իսէ չեղու քի ես անոր հախը տեղը պիտի դնիմ, զէրէ վէքսիլ ունիմ նարաձեռօքը ստորագրեալ» :

Միշտ հեղող ճակատագիրը այնպէս էր սարքել, որ այն քաղաքը, որը հայութեան տեղէ է մի շարք ականաւոր հայ գրողներ՝ Գարեգիէլ եւ Ռաֆայէլ Պատկանեաններ, Միքայէլ Նալբանդեանց, Ս. Տիգրանեան, Փիլիպպոս Վարդանեան, Պետրոս Սիմոնեան («Մեղու Հայաստանի»-ի խմբագիր), Գէորգ Դոգոնեան, իսկ հետագայում տասնեակ հայ հրապարակագիրներ եւ աղջային դործիչներ, — չէր տւած իր հայերէնը, որ ամուր աղդակ լինէր տեղացիների աղդապահպահնաման հարցում եւ որի վրա կարողանար յենել հայ բնակչութիւնը՝ խուսափելու համար օտարացումից:

Դեռ մանկական տարիներից յիշում եմ մեր՝ աշակերտներիս իւրայասուկ զբութիւնը հայերէնի վերաբերմամբ: Մեր ուսումնարանի՝ թեմական դպրոցի զրաբար լեզւի ուսուցիչը համարեա թէ ժըխտում էր աշխարհաբառի անհրաժեշտութիւնը. ծաղրում էր միւս ուսուցիչների մեզ կարդալու յանձնաբարած գրքերը, օրինակ՝ Ծերենցի վէպէրի լեզուն, իրեւ «Պոլսոյ ապիկար լեզու». ծիծաղում էր Թիֆլիսում հրատարկւած հայերէնի «ցիլինդրացիա», «կուլտուռա» ու բազմաթիւ օտար բառերի եւ ուսուանութեամբ օժտւած գրքերի վրա: Միւս կողմից՝ Հայոց պատմութեան ուսուցիչ Երւանդ Շահպեղը համոզում էր մեղ կառչել միայն արեւելահայ աշխարհաբառին ու նրա հնչիւնաբանութեան, իսկ մեր միւս ուսուցիչները ծիծաղում էին արեւելահայոց «էղուց – մէղուց»-ի վրա: Մենք, ինչպէս ասում են, չգիտէինք՝ ո՞ր սուրբին պէտք էր մոմ վառել: Յետոյ նշանակեցին աշխարհաբար լեզւի մի նոր ուսուցիչ, որը պատժում էր մեր գործածած «Հոռ», «Հոն», «կըլլայ» բառերի համար, ու մենք համարեա թէ ընդունել էինք այն ճշմարտութիւնը, որ կայ միայն մի օրինաւոր հայերէն լեզու, եւ այդ՝ արեւելահայերէնն է, երբ, յանկարծ, պատահեց մի դէպք, որը հերքեց բոլոր հեղինակութիւնները մեր

աչքում։ դա՝ դերասան Պետրոս Ադամեանի երեւալն էր մեր հորից գոններում եւ նրա թողած անջնջելի տպաւորութիւնները մեր մանուկ օրտերի վրա։

Ադամեանը եկել – հաստատել էր մեր քաղաքում եւ երեք տարի շարունակ ձմեռւայ ամիսներին ներկայացումներ էր տալիս «Հայրապետեան» թատրոնում։ Իմ հայրենակիցները, մեծ թէ փոքր, հարուստ թէ համեստ խաւերից, կրթւած թէ անդրադէտ, բոլորը, ուրոնք միայն յաճախում էին Ադամեանի ներկայացումները՝ հիացած էին ոչ միայն նրա խաղից, այլ եւ հանճարեղ դերասանի առողջապահութիւնից, նրա լեզուից եւ արտասանութիւնից։ Քաղաքում տարածւած էին նրա խօսքերը, թէ «ո՛չ պոլսահայ բարբառը, ո՛չ ալ կովկասահայ բարբառը կոչտ են. պէտք է միայն զիանալ նուրբր արտասանել»։ Ես եւ ընկերներս աշխատում էինք ընդօրինակել Ադամեանի արտասանութիւնը եւ խօսւածքի ձեւը։ Գալով նրա դէմքի ու աչքերի արտայայտութեան, ձայնին եւ ընդհանրապէս խաղին՝ ասեմ հետեւեալը. տարիներ յետոյ, երբ առիթ ունեցայ տեսնել ուրիշ շատ հայ եւ օտար ողբերգակներ, ես հասկցայ հայ անմահ ողբերգուի անջնջելի հմայքի գաղտնիքը. ամենաողբերգական բովէներին Ադամեանը խուսափում էր կուրծքը ծեծել բունցքների անվերջ հարւածներով, իր ցասկոտութիւնը չէր արտայայտում զոռում – պոռումներով ու սպանական կատղած ցուլի աչքերով. դերի պահանջած ցասումն ու կատաղութիւնը կամ խելագարութեան հասնող յուսահատութիւնը՝ նա արտայայտում էր նուրբ եիեւէջներով. նրա հանճարը չափն ու կըշոյթն էր։ Ի բնէ նկարիչ եւ քանաստեղծ՝ նա օժտւած էր գեղագիտական ճաշակով, որ եւ արտայայտում էր նրա թատերական խաղերում. ասես իրագործում էր Համլէթի խորհուրդը դերասաններին՝ «կտաղութեան ու ցասկոտութեան բովէներին աշխատեցէք մընալ նուրբ եւ նրբաշաւիղ»։

Վարդանանց տօների առթիւ մ՛նք էլ, ըստ ընդունւած աշակերտական աւանդութեան, ամէն տարի ներկայացնում էինք «Վարդանանց Պատերազմը» եւ աշխատում էինք ընդօրինակել Ադամեանի խաղն ու ձեւերը. բայց ի գո՞ւր... Յամենայն դէպս՝ Պ. Ադամեանը, բացի իր դերասանական տաղանդի փայլից ու հմայքից, ընդմիշտ ամրացրեց մեր աշակերտական սրտերում եւ այն համոզումը, թէ արեւմտահայ եւ արեւելահայ բարբառները հաւասար իրաւունք ունեն զոյութեան, գուցէ արեւմտահայ լեզուն մինչեւ խկաւելի գեղեցիկ է, բայց սա արդէն ճաշակի հարց էր։

Յաճախ մանկական հասակում, երբ դեռ չեն զարթնած ու չեն

գիտակցւած զուտ ազդային բնազդները, դարթնում է մարդկային արժանապատռութեան ազօտ զգացմունքը։ Այդպէս պատահեց եւ ինձ հետ։

Յիշում եմ՝ հազիւ 12 – 13 տարեկան աշակերտներ էինք, երբ մէկ օր էլ ուսուց լեզվի ուսուցիչը, որ մի թթու ուսուամոլ մարդ էր, մեղ պատւիրեց անդիր սերտել մի կտոր Պուշկինի այն քերթւածից, որի մէջ, ի միջի այլոց, կար հետեւեալ ծանօթ տողը. «... Դու ստրուկ ես, դու վախկոտ ես, դու հայ ես...»։ Մեր աշակերտական սիրտը սաստիկ զայրացած էր ու վիրաւորւած, որ «վախկոտ եւ ստրուկ» բառերը հոմանիշ էին դարձած հայ բառին։ Դասից յետոյ մենք խըմբովին դիմեցինք մեր ծերունի եւ յարդւած հայ ուսուցիչներից մէկին ու բողոքեցինք, միտու չէ՝ ուսու բանաստեղծի՞, թէ՞ ուսուցչի դէմ, բայց մեր ծերունի ուսուցիչը տիրորէն ու սառն պատասխանեց. «Ինչո՞ւ կը վիրաւորւիք ու կը գանգատւիք. չդիտէ՞ք որ հայը այժմ ե՛ւ ստրուկ է, ե՛ւ վախկոտ։ Եթէ վախկոտ չըլլար, չէ՞ր պաշտպաններ իւր կրօնն ու պատիւը, ինչպէս այդ ըրաւ մեր Քաջ Վարդանը մարքը ձեռքին, մեր ոսկեգալին... Է՞հ, ի՞նչ ժամանակներ են, ոսկեղարը անցաւ, մնաց ք... դարը...»։

Բայց, ի մէծ զարմանս ամենքին՝ երեք օրից յետոյ ուսուց լեզվի ուսուցիչը դասարան մտած - չմտած ասաց. «Այսօր եւ հետազայդասերին պիտի ծանօթանանք Գոգովի եւ Լերմոնթովի գրւածքներին...»։ Այդպիսով մեղ վրդովող տողերը դասից հանւած էին...։

Ութսունական թւականների սկիզբներից Ծուսաստանում սկսում էր տարածւել կառավարութեան ազդայնական քաղաքականութիւնը, որը իսկոյն հակազդէի մինուլուս ստեղծեց Ծուսահայութեան մէջ։ Այդպէս եղաւ եւ մեր նոր – Նախիջեւանում։ Մեր զգացմունքները բնազդօրէն ոտք դրին նախնական կամ «նեղ» ազգասիրութեան ճամրան։ արդէն իմ հասկացողութեան մէջ էլ մտած էր «օտարը» եւ «մենք հայերս» մտայնութիւնը, «ոռու ուղղափառ» եւ «հայ լուսաւորչական» ազօտ հասկացողութիւնները։ Զեմ կարող չիշել այստեղ մի դէպք, որ իր ժամանակին խոր տպաւորութիւն էր թողել իմ վրա։

Աշնան անձրեւոտ օրերից մէկն էր, երբ հայրս բաւականին յուղած ներս է մտնում եւ ասում է մօրս, որը մեղ հետ արդէն ճաշի սեղան էր նստած։

- Լոեցի՞ր վերջի նորութիւնը...
- Զէ, ի՞նչ կայ, — պատասխանում է մայրս։
- Առաւօտուն, — շարունակում է հայրս, — հիւանդներ ընդու...

նետելու վրա էի, երբ Ռափայէլ Պատկանեանի մեծ տղան հեւքը բըռ-
նած նամակ բերեց Օլգայէն (Ռ. Պատկանեանի կինը), թէ՝ «բժիշկ,
Ասածոյ խաթրին, չուստ արա, արի՛ մեզի՛ Ռափայէլը կը մեռնի»:
Շուտ մը թէզ էլլայ գնացի եւ ի՞նչ տեսնեմ. մեր Պատկանեանը էրէ-
սը պատին արած, սոֆայի վրա պառկած, լիմոնի դուն կտրած, աչ-
քերը արցունքով՝ անդադար կը կրկնէ. «Ալջիկս ինձի սաղ – սաղ գե-
րեզման տարաւ...»: Բան մը չհասկցայ. բայց Օլգան բացատրեց, որ
անոնց մեծ աղջիկը՝ Սանդուխտը, որ Պետերուրդի ուսանողուհի էր
նկարչական վարժարանում, մեծ ալ տաղանդ ունէր ու հօրը հպար-
տութիւնն էր, սիրահարելի է ուսւ ուսանողի վրա ու առանց ծնողա-
ցը իմացնելու, ուսւ – ուղղափառ ժամի մէջ պսակւիլ է...»:

— Ես ալ, — շարունակում է յուզւած պատմել հայրս, — որ հօ-
րը տեղը ըլլայի, գլուխս պատին կը զարնէի, բայց չիւնքիմ հէքիմ
ինք՝ սկսեցի միիթարել Պատկանեանին՝ «է՛յ, մոոցի՛ր աղջիկդ, գլո-
խը – քարը. շատ զաւակ ունեցողը ուզէ – չուզէ շուն ու կատուի հետ
խնամի կ'ըլլայ. դուն սա՛ղ ըլլաս. հէպէթ Աստուծով՝ մէկալ ութը
երեխաներդ Գամառ – Քաթիպայի վառքիդ արժանի զաւակներ կըլ-
լան...»: Ռափայէլը քէզ մը հանդարասած, արցունքը աչքերին՝ ձեռքս
սղմէց ու ասաց. «Ի հարկէ, դուք բժիշկներդ մեռած մարդուն ալ մը-
խիթարական խօսք կը դտնիք...»:

Ու հայրս ամբողջ ճաշին երկարօրէն անդրադարձաւ այդ «չլուած,
չտեսնւած» դէպքին: «Հայրը քառասուն տարիներ ազգասիրութեան
ու հայսամբութեան մասին գրել ու քարոզելէ ետքը, զաւակը ելլէ ու
ուսւ ուղղափառի հետ պսակւի՛. ասել է Գամառ – Քաթիպան պիտի
ունենայ ուսւ սերունդ...»: Իմ աշակերտական հասկացողութեան
մէջ այդ դէպքը աւելի մեծ անակնկալ էր, քան թէ եթէ հայրս ասէր,
որ այդ օրը արեւը արեւմուտքից է ծագել: Նման մտայնութեան տէր
էր եւ իմ մեծ թէ փոքր շրջապատը:

Մանկական անցեալից մի այլ դրւագ էլ եմ յիշում, որ նոյնպէս
ամուր տպաւորւած է իմ մտքի մէջ, թէեւ այն ժամանակները շատ
աղօտ կերպով էի ըմբռնում նրա խորհուրդը: Երբ ձմեռը մեր տանն
էր իջնում Ղղարից եկող Բժ. Ա. Սուլթան – Շահը, որ մօրս եղբայրն
էր եւ հօրս համալսարանական մտերիմ ընկերը, ու նկատում էր սեն-
եակումս կախւած թռչունով վանդակը, միշտ պատւիրում էր ինձ.
«Նայէ», չմոռնաս Զատկի կիրակին սախա – խուշին ազատել...»: Պէտք է բացատրեմ հետեւեալը: Մեր քաղաքում կար հին սովորու-
թիւն, ըստ երեւոյթին, վաթսունական թւականներից սկսած, որ հա-
սակաւորների օդնութեամբ մենք՝ փոքրիկներս անխտրօրէն գործա-

դրում էինք. աշնան ամիսներին վոքրիկ տղայքս «սախա – խուշի», «պիւլպիւլ» եւ այլ երգող թռչնիկներ էինք բռնում պարտէզներում եւ տուն բերելով՝ պահում էինք ձմեռը վանդակներում. երբ համում էր գարունը, Զատկի առաւօտը, դուրս էինք հանում վանդակը եւ թռչնիկներին թողնում աղատ թռչելու: Վանդակի դռները բանալիս՝ ասում էինք. «Դէ՛, թոփր ծիծեռնակ, ծնած տեղդ Աշոտարակ»: Իսկ մեր մեծ մայրերը կամ հասակաւորները շշնչում էին. «Ազատեա՛զմեղ, մարդասէրն Աստւած»: Միայն երբ հասայ պատանեկան տարիքիս, մայրս բացատրեց թէ՛ երբ մեր քաղաքացի Մ. Նալբանդեանցը ձերբակալւել է, նրա ընկերները եւ յարդողները ուխտած են եղել ամէն տարի Զատկի առաւօտուն աղատել բոլոր «բանտարկւած» թռչնիկներին, ի յիշատակ իրենց բանտարկւած ընկերոջ, որը միշտ երգած է եղել «Ազատութեան» մասին, բայց զրկւած է եղել աղատութիւնից:

Այդ պատմութիւնը ինձ պարզեց եւ մի շարք ուրիշ բառեր ու ակնարկներ, որ մանկական օրերում լսած էի տանը, բայց չէի ըմբռնած միտքը: Այդպէս՝ երբ մայրս դաշնամուր էր նւագում, յաճախ, միւս սենեակից մօտենում էր հայրս ու ասում. «Զալէ՛ նորա սիրած բաները»: Եւ մայրս նւագում էր կտորներ «Il Trovatore» իտալական օպերայից, իսկ հայրս, աչքերը արցունքով, հեռանում էր առանձնասենեակը: Հետազայում միայն իմացայ, որ հօրս գործածած «նորա», «նա» բառերը նշանակում էին՝ Մ. Նալբանդեանց: Այդ օրերից սկսած եւ շարունակ քսան տարիներ, կամ հայրս, կամ մօրեղ-բայրս՝ Բժ. Ա. Սուլթան – Շահը մեր բնտանիքի նեղ շրջանակում պատմում էին բոլոր մանրամասնութիւններով իրենց ընկերոջ՝ Մ. Նալբանդեանցի փոթորկալից եւ եղերական կեանքը:

Միջանկեալ պէտք է ասեմ, որ թէ՛ հայրս եւ թէ մօրեղբայրս ի մօտոյ կապւած են եղել Մոսկւայի «Հիւսիսափայլ» ամսագրի հետ, մասսամբ էլ աշխատակցել են. Բժ. Սուլթան – Շահը զետեղել էր այդ ամսագրում մի ինքնուրոյն կատակերգութիւն՝ «Փամանակակից Լուսաւորիչները», իսկ հայրս տւել էր «Հիւսիսափայլ»ին սուսերէնից թարգմանած նորավէտեր եւ 1858 թ. առանձին զրքոյկով հրատարակել էր «Աշխարհաբար լեգի առաջին այրբենարանը եւ ընթերցանութեան նիւթեր»: Երբ այս վերջին տարիները հրատարակեցին Մ. Նալբանդեանցի բանտից գրած 36 նամակները, պարզեց, որ զրանցից 32 հատը գրւած է եղել Բժ. Ա. Սուլթան – Շահին, որի հետ մեր մեծ հայրենասէրը, ի միջի այլոց, մտադիր է եղել բնաբանական – քիմիական ինչ որ մի գիտական հարցով զբաղւել:

**

Հասնում էինք պատանեկան այն հասակին, երբ ընթերցանութեան ծարաւը ո՛չ ծայր ունի, ո՛չ սահման։ Ամէն հեղինակ նոր էր մեզ համար եւ յափշտակում մեղ։ Ժիւլ Վէռնի ճանապարհորդութիւնները մղում էին մեզ դէպի Ավրիկէի անտառները կամ հարաւային բեւեռը։ Վալթէո - Սքոթի վէպերից յետոյ, մենք երազում էինք խորհրդաւոր ամրոցների մասին։ Յետոյ Տիւսապլ կամ Ծերենցը, որից յետոյ Կիլիկիան դարձաւ մեր աչքում Հայաստանի փառաւոր անցեալն ու ապագան։ Սրանց յաջորդեց Բաֆֆին, որի վէպերի մասին աղօտ կերպով վաղուց լսած էի մօրիցս, որ կարդում էր մեր տանը ստացող «Արձագանք»-ն ու «Մշակ»-ը, բայց այդ լազգիները իմ ձեռքս չէին ընկնում։ Հայրս արգելում էր, որ աշակերտ հասակիս լրագիր կարդամ, «մանաւաղ որ, ասում էր, «Մշակ»-ը կարգալով՝ գիտցած հայերէնդ ալ կը մոռնաս . . .»։

Սկսել էր ամենուրեք Բաֆֆիի վէպերով յափշտակման ըրջանը։ Մեծ եղբայրս, որ Լազարեան Ճեմարանի աշակերտ էր, գրում էր Մոսկայից, որ ճեմարանական հայ աշակերտները գիշեր - ցերեկ Բաֆֆի են կարդում եւ այն աստիճան օրական դասերից յետ են մնացել, որ երեւի «քննութիւնները» չպիտի կարողանան յաջողութեամբ վերջացնել։ Մեղ մօտ, Նոր - Նախիջեւանում, Բաֆֆիի վէպերը ո՛չ միայն մեզ հոգեկան շփման մէջ ձգեցին տաճկահայ կեանքի հետ, այլ ունենան եւ իրենց որոշ բացասական, գոնէ ժամանակաւորապէս, աղղեցութիւնը մեր վրա։ մինչ այդ՝ մենք շատ էինք սիրում մեզի աւանդւած «դասականներին»՝ Խորենացուն, Փարպեցուն, Բագրատունու «Հայկ Դիւցազնը», «Եղիականը»։ Բաֆֆիից յետոյ մենք ծալեցինք ու պահեցինք ամէն տեսակ գրաբար լեզով դրած գիրք։ Աւելին՝ մենք հեղնում էինք գրաբառագէտներին, ու երբ մի օր էլ պէտք եղաւ Դաւիթ Անյաղթի «Ելոյր հարկաւորի» դարձւածքը վերլուծել, մենք ծերունի ուսուցչին հեղնօրէն ու արհամարհանքով թարգմանեցինք՝ «հարկաւորութեան ելլել . . .»։

Նոր մտայնութիւնը արդպէս էր պահանջում, որովհետեւ հաւատացած էինք, որ հինը ընդմիշտ մեռած է, զարթել է նորը. պէտք է ապլել նոր հովերով, նոր մտքերով ու նոր ճանապարհով ընթանալ։ Եւ ո՛րքան աւելի էինք կարդում, այնքան աւելի կուտակում էինք մեր «աղղասիբական», «աղղային ծառայութեան» ծրագիրներն ու երազները, բայց այդ բոլոր հասկացողութիւնները վերին աստիճանի աղօտ էին եւ մշուշային։ Որոշ էր միայն մի բան մեզ համար,

որ Մուշն ու Տարօնը այն վայրերն էին լինելու, որտեղ մենք պէտք է գործէինք «ապագայում»։ Այս էլ, երեւի, բացատրում էր հետեւեալով։

Պէտք է ասեմ, որ շատ տարիներ առաջ, երբ մենք դեռ Բաֆֆիի վէպերը չէինք էլ կարդացած, մեր քաղաքում առեւտուր անող պազիրկեան Նազարէթ պատմում էր խորհրդաւոր բաներ, որ բերնից բերան կրկնուում էին մեր չուրջը։ Այդ Նազարէթը, ոռւս – տաճկական պատերազմից անմիջապէս յետոյ, մօտաւրապէս 1878 – 79 թւականներին, ըստ Նոր – Նախիջեւանցիների հին սովորութեան, գնացել էր իր ուխտը կատարելու Մշոյ Սուլթան Սուլթը Կարապետին։ Ուխտի գնուում էին սովորաբար ամուսնութիւնից առաջ։ Ըստ երեւոյթին, Նազարէթը ունէր լուրջ սկատճառներ այլ ուխտը կատարելու, որովհետեւ նրա հինգ եղբայրներից եւ ոչ մէկը զաւակ չունէր ու «ընուանեաց յոյաը» նրա յաջող ամուսնութեան վրա էր դրւած…

Նազարէթը մնացել էր «Հոնի տեղերը» մի երկու ամիս, պատահել էր «քափկապէն էկած» 10 – 15 հայ երիտասարդներին եւ սրանց հետ ապրել ու ճանապարհորդութիւններ արել Տարօնի զանազան տեղերը։ Վերապանալուց ու, մանաւանդ, ամուսնութեան «յաջողութիւններից» յետոյ, նա խիստ գովարանում էր Ս. Կարապետի զօրութիւնը և ողեւորութեամբ սկատմում իր սկատահած «կտրիճների» մասին։ «Մատաղէն ետքը՝ Քափկապէն էկած առխառաշներս (ընկերակիցներս) չուզացին ետ էրթալ. մենք, ասին, հոսի ժողովուրդին խելք – խրատ պիտի սորվեցնունք. մենք, ասին, մեր Մայր Հայաստանը կուզինք տաճիկի ճեռքէն ազատել, ու ատոր համար հոսի հային կուզինք թիւֆէնք ու խամայ տալ. իրենց մէջն ալ ատ կտրիճները իմ չհասկցած լիւզույով բաներ կը սկատմէին ու սալթը «Եղափոխութիւնն» պիտի անինք կասէին։ Ամենքն ալ կարմիր գօտի կապած էին մէջքերնին, ունէին մէկ մէկ հաստ ոչվոլիչու ու խամայ. շտէ՛, մարդը աղպէս պիտի ըլլայ. պէթէ՛ր կուտուուկ տղաք էին։ Ինձի վախ տեղերը քիչ մը ճամբայ ճղեցին, ես ալ անոնց թիւֆէնքս պաշխեցի. անկէ վերէն խարեր չունիմ, իտա եղափոխութիւնը եղա՞ւ, չէ նէ՞ չեղաւ։» :

Նազարէթի այս անպանոյն լեզով պատմութիւնները, մեղ համար խորհրդաւոր կարմիր գօտիները ու բոլորովին անհասկանալի «եղափոխութիւնը» խոր տպաւրութիւն էին թողնում մեր մանկական հոգու վրա, բայց երբ հասանք այն տարիքին, երբ արգէն Բաֆֆիի վէպերն էինք կարդում, այդ վէպերում եւս նոր խորհրդաւոր «կտրիճներին» ու «կուտրուկ» մարդկանց էինք հանդիպում,

արդէն մեզ համար շատ բան պարզ երեւցաւ . գոնէ մենք այդպէս էինք կարծում : Ու մինչդեռ Ռաֆֆիի վէպերի օրէց օր զարդացող ոգեւորութեամբ էինք ապրում , մի օր էլ լսեցինք , որ «վիալասմի» Ռաֆֆին մեռել է : Լուրը անակնկալ էր ամենքիս համար եւ մեզ յուղում առաջ բերեց , ուժեղ տպաւորութիւն գործեց մեր պատանեկան հոգիների վրա : *)

Անցեալի յիշատակները նման են իրար մէջ բացուած ու իրար յա-
նուածող անվերջ սենեակների , որոնք անծայր հետեւում են մէկը միւ-
սին :

Այդպէս՝ անկարող եմ մոռանալ եւ իմ պատանեկան շրջանի այն
խրայատուկ ազդեցութիւնը , որ ունեցաւ մեր մատաղ աշխարհայ-
եացքի վրա կիւրեղ Վ. Սրապեանը : Միտս չէ՝ ինչո՞ւ եւ ի՞նչպէս ե-
կած էր մեր քաղաքը («փախչելով երուսաղէմի վանքից» , ինչպէս
պնդում էին ոմանք) , մի քարոզիչ վարդապետ , որին շուտով յանձ-
նեցին թեմական դպրանոցի աստւածաբանութեան դասերը :

Պէտք է ասեմ , որ մեր տանը , առհասարակ , այնքան էլ երես չէին
տալիս կղերներին . նախ՝ հայրս , չնայած որ հաւատում էր եւ՝ Աս-
տուծոյ գոյութեան , եւ հոգու անմահութեան , եկեղեցի չէր յաճա-
խում . «Զեմ սիրիր կեղծաւոր դասակարգը» , ասում էր նա քահանա-
ների մասին , իսկ վարդապետների ու եպիսկոպոսների վերաբեր-
մամբ յայտնած կարծիքը աւելի եւս «ուժեղ» էր : Երեւի այդ բոլո-
րը վաթսունական թւականների հանրային կոփեներից եւ Գաբր . Վ .
Արլազովսկու ու Մ . Նալբանդեանցի միջեւ եղած բանակոփեներից ու
վարդապետների «մատնութիւններից» ստացւած տպաւորութեան
հետեւանքն էր : Կիւրեղ Վ. Սրապեանի մասին հօրս եւ մեր քաղաքա-
ցիների կարծիքը աւելի լաւ էր . հայ քաղաքավալութիւնը ասած էր նրա
մասին . «Զարմանալի վարդապետ է . ի՞նչ ստակ կը սիրէ , ի՞նչ ուսւ
աղախին , ի՞նչ ոսխի խմող է , ի՞նչ ալ ուստան է . կերեւի թէ խարա-
պաշներուն մէջն ալ սուրբեր կան» :

*) Յաջորդ հասուածը , որ վերաբերում է Գաման - Փաթիպայի կարծիքներին Բաֆֆիի մասին , այս յուշերի հեղինակի հաւանուրեամբ , տրամադրեցինք Բաֆֆիի յորելենական ժաղավագութիւն , որ լայս ընծայեց Փաթիպի Բաֆֆիի Յորելենական Յանձնաժողովը : Կը յամանարակնենք մեր ըմբերցողներին այդ կտորը կարդալ յիշեալ ժողովածուի մէջ :

Կիւրեղի հմայքներից մէկն էլ այն էր, որ յաճախում էր ոչ մի-
այն հարուստ տներ, այլ եւ աղքատ, մի բան, որ չտեսնեած երեւոյթ
էր: Նա մեր սրտերը գրաւեց իր անմիջական տէրվիշութեամբ, իւրա-
յատուկ նիհիլիզմով ու վերին աստիճանի անինայ ատելութեամբ զէ-
պի ոռուս կառավարութիւնը, որը այդ ժամանակները հաստատապէս
իր ծանր թաթով սեղմում էր Ռուսահայութեան աղդային մշակոյ-
թը: Ինքնատիպ մարդ էր. ժխտում էր գեղարւեստի եւ, մանաւանդ,
բանաստեղծութեան օգուտուր, չէր ընդունում բժիշկների անհրաժեշ-
տութիւնը, «զի մարդ եթէ բնութեան օրէնքով ապրի, բժիշկի մը
պէտք չունենար»: «Մարդս, ասում էր, պէտք է բնական կեանքից
չհեռանայ, իսկ Հայերը պէտք է միայն երկրագործ - գիւղացիներ
լինեն: Մեր, պատանիներիս ապագայի մասին խօսելով՝ քարոզում
էր գնալ երկրագործութեամբ զրադւել, քան տարիքը եկած - չե-
կած ամուսնանալ ու մեծացնել սեփական ընտանիքը 10 - 15 զաւակ-
ներով: «Հոդ չէ, եթէ անոնց թիւը քանին ալ անցնի, զի Աստած
ըսած է՝ աճեցէք եւ բազմացարուք»:

Կիւրեղ վ. ունէր եւ իր յատուկ փիլիսոփայութիւնը. «Մարդուս
վերին կոչումն է չէ՛ թէ թագաւոր մը, զիտնական մը, բանաստեղծ
մը եւ այլ բան ըլլալը, այլ մարդը նախ եւ առաջ ըլլալու է մարդ եւ
Աստուծոյ էակ: Մարդիկ ի բնէ հաւասար են մէկզմէկու. բան մը
ըլլալը կը տանի դէպի հպարտութիւն, ինքնասիրութիւն. շաէ՛, մարդ-
կային չարիքն ալ ատկէ է. բան մը ըլլալը ասել է մարդու մասնիկ
ըլլալ: Մարդ պէտք է լման ըլլայ, իրրեւ Աստուծոյ պատկեր. բոլոր
կրօնները ատ կը պահանջնեն: Պէտք է որ մենք զմեզ աւելի նւազ սի-
րենք — Հո՛ն է մարդուս երջանկութիւնը: Ու եթէ պէտք ըլլայ՝ զոհ-
միլլ Քրիստոսին մօտենալու պէս բան մըն է»: Մենք համաձայնը-
ւում էինք նրա հետ. մանկական հողին մեղրամոմի յատկութիւն
ունի, ինչպէս ծկես, այնպէս է ծկում է: Նա հեղնում էր կամ ժրի-
տում ընդունած հեղինակութիւնները. «Պորտարայծ» էր անւանում
Պատրիարքին. Մակար Կաթողիկոսի մասին ասում էր. «Անիկա
քիւրտ է եւ ալրազէտ»: Մ. Խրիմեանի մասին ասում էր. «Երիտա-
սարդ հասակին լաւ էր, բայց այժմ սնավիտ է եւ փառասէր». Գ.
Արծրունու մասին, չգիտեմ ճիշտ, թէ հնարած, պատմութիւն էր
անում. իրը թէ՛ երբ Գր. Արծրունին խնդիր էր ներկայացրել «Մշակ»
լրագրի հրատարակութեան համար, հայ գրաքնիչը հարցրած է ե-
ղել՝ «բայց չէ՞ որ գուք հայերէն չգիտէք»: — «Կարեւորը այն չէ,
որ ես հայերէն գիտնամ, պատասխանել է Արծրունին, կարեւորը այն
է, որ իմ բաժանորդները հայերէն գիտնան»: Կիւրեղ վ. քարոզում
էր գինու, ծխախոտի ու մսի գործածութեան դէմ. պահանջում էր,

որ պատանին կոյս մնայ մինչեւ ամուսնութիւն։ աւելորդ էր համարում, մինչեւ իսկ վնասակար, մեր սովորած լատին եւ յոյն լեզուները։ Խօսում էր «Հայ ազգին ասպառնացող վտանգի» մասին, բայց այդ վտանգը տեսնում էր այն բանի մէջ, որ՝ «ոռուսահայը ոռուսի անբարոյական վարքուրարքը ընդունած է, ինքն ալ, եթէ շատ չըսեմ, քսան տարիէն պիտի ոռուսանայ»։

Սոյն այս տեսակ մտքերի խառնուրդը, մեր ընդունած հեղինակութիւնների ժխտումը, մարդկային ու ազգային հորիզոնների խխտ սեղմումը, մինչեւ իսկ ոչնչացումը խառնաշփոթ, բայց հուժկու տըպաւորութիւն էր թողնում իմ եւ իմ հասակակիցներիս վրա։ Մեր մէջ զեր հասուն չէր քննադատական վերաբերմունքը, մանաւանդ անշահախնդրօրէն արտայայտւած մտքի առթիւ։ մենք արդէն պատշաճ էինք ընդունել այն «Ճշմարտութիւնը», որ հայ ազգը կարելի է եւ պէտք է փրկել անկումից՝ քարտելով աւետարանի պարզ կեանքը, մաքառելով զեղիսութեան ու անբարոյականութեան դէմ եւ այդ նպատակով՝ լաւագոյն միջոցն է նախ եւ առաջ կուսակրօնութիւն ընդունիլ, «Քաղաքէ քաղաք զնալ ու քարոզել եւ մոլորեալ ոչխարներու հոգին փրկել», ինչպէս յորդորում էր կիւրեղ վարդապետը եւ ինչ որ մենք էլ, ասում եմ, համարեա թէ պատրաստ էինք անելու։ Բայց այդ խառնակինթոր հոգերանական շրջանին մեր պատանեկան «չ շատ կայուն ըմբռնումները շուտով աւելի մի հարւածով պիտի աւելէին մեր մանուկ սրտերից, իսկ մեր գլխում պիտի զարթնէր քննադատական կայծը դէպի կիւրեղ վարդապետի կէս – թուլսուրյական, կէս – տէրպիշական փիլիսոփայութիւնը։

Պէտք է ասեմ, որ կիւրեղը եկեղեցական հերթական իր քարոզներից մէկը նւերել էր հայ գրադէանների վնասակարութեան, իսկ Գամառ – Քաթիսպայի մասին ասել էր, թէ՝ «անիկա բանաստեղծ չէ, անիկա բանաեղծ չ»։ Յիշում եմ՝ եկեղեցու խորանից հեռու, աջ կողմը՝ կանդնած էր Ռ. Պատկանեանը, շուրջն էլ իր Արհեստագիտաց վարժարանի աշակերտները։ Ու երբ լսւեց «բանաեղծ» մակղիբը, ամենքը վախեցած հայեաց ձգեցին նրա վրա, որ կանդնած էր դունատ եւ արտաքուստ անխոռվ։ Քարոզից յետոյ շատ շուտ հեռացաւ եկեղեցուց։ իսկ երկու օր չանցած՝ ձեռքից ձեռք պտտում էր նրա բուռն ոճով դրւած (տեղային բարբառով) պարսաւը կիւրեղ վեի վրա՝ համբաւաւոր «Սատանայի օջիլ»ը, որի մէջ անկրկնելի մակդիրներով լուսաբանւած էր «խարապաշխ» կեանքը եւ մանաւանդ նըրա ինքնատիպ «փիլիսոփայութիւնները»։ Գաւառական նեղ շրջանակում «Սատանայի օջիլ» պայթած ուժանակի զօրութեամբ աւելում-

ներ արաւ կիւրեղ վարդապետի հետեւողների սրտերում եւ իրեն ստիլեց յուսահատական ճիչ արձակել : Նրա աշակերտների թիւը նըւազեց , ու վարդապետը կարծ ժամանակից յետոյ թօթափելով ստքերի փոշին՝ ձգեց հեռացաւ քաղաքից : Մեր պատանեկան սրտերում եւս մեծ աւերումներ էին եղած . մեր աչքերը բացւած էին , մենք տեսնում էինք կամ զգում հակասութիւններ նրա քարոզած մտքերի մէջ : Բարոյագիտական հարցերի վերաբերմամբ թողած աղղիցութիւնը անշուշտ մեծ էր , բայց մեծ էր եւ հիասթափումը նրա բոլոր մնացեալ մտքերից ու ծրագրներից :

Զարմանալի կենսապարզեւ է սակայն պատանեկան հասակը . հազիւ մի անսխալական մտքից աղատւած , հազիւ մի պատրանք մոռացած՝ բնազգօրէն պահանջ ես զգում հաղորդակից լինելու սահող կեանքի ծնած նոր ապրումների , նոր ոգեւորութիւններին ու նոր յափշտակութիւններին , մանաւանդ , երբ նրանք հիմնականում համապատասխանում են քո պատանիի խառնւածքին :

1889 թ. ընկերներս եւ ես մեզ վրա նայում էինք արդէն իրրեւ «գիտակից ազգասէրների» . «աղդը» եւ «Հայաստանը» հոլովում էինք ոկտոք եւ չպէտք տեղը : Հրատարակում էինք «Տարերք» անունով մի երկշարաթաթերթ (ի հարկէ , ձևագիր եւ Չօրինակ) , որը ոչ միայն կարդալ էինք տալիս քաղաքի հայ աշակերտներին , այլ եւ , ուղարկում էինք Մոսկվա՝ Լաղարեան Ճեմարան , իսկ այստեղից փոխադարձաբար ստանում էինք «Գործ» ձեռագիր տմասգիրը , որի հայերէն մասը խմբագրում էր Մինաս եղբայրս , իսկ ոուսերէն բաժինը՝ նրա ոուս ընկեր անկեղծ հայասէր եւ հայ հին հերոսներով ոգեւորւած իւրից Վեսելովսկին . վերջինս դարմանալի յաջողութեամբ թարգմանում էր Մ . Նալբանդեանցի , Գամառ - Քաթիպայի , Սմբ . Շահ - Աղիզի բանաստեղծութիւնները ոտանաւորներով . նրա սիրած հերոսն էր Վարդան Մամիկոնեանը : Վեսելովսկին ինքն էլ Լաղարեան Ճեմարանի աշակերտ էր , նրա հայրը յայտնի պրոֆեսոր էր արեւմտեան դրականութեան , մայրը՝ թարգմանիչ անդիմացի եւ Փրանսիացի նորագոյն վիսագիրների : Նրանց հայասիրութեան մասին հետազայում դեռ առիթ կ'ունենամ անդրագառնալու :

Մեր «Տարերք»-ի համար , որի խմբագիրը ես էի , իսկ գլխաւոր աշխատակիցը իմ շատ ընդունակ ընկեր Ք .-ը (ներկայումս լլ . Ռուսաստանի յայտնի պրոֆեսոր է) : Զուտ «գրական» բաժինը կազմում էին Նախիջևանի բարբառով գրած նորավէպեր , մասամբ էլ , ծաղրագրութիւններ այս կամ այն հասարակական դէմքի վրա : Գալով «խմբագրականներին»՝ առնում էինք «Մշակ»-ում , «Նոր Գար»-ում ,

«Արձագանք»—ում արտայայտուած մտքերը եւ ենթարկելով մեր պատանեկան մտայնութեան ու աշխարհայեացքին՝ հրամցնում էինք մեր «ընթերցողներին» :

«Տարերը»—ի համարներից մէկում մի օր դուրս եկաւ Սիւլիկի (Ռ. Պատկանեանի կեղծանուններից մէկը) երգիծաբանական ութ տող ոտանաւորը «Նոր՝ Դար»—ի դէմ, որ դեռ ոչ մի տեղ չէր արպեած եւ որ ես ձեռք էի բերել Ռ. Պատկանեանի Յովհաննէս որդու աշխացութեամբ։ Սա առանց հօրը իմացնելու՝ արտազրել էր նրա տետրակից եւ գաղտագողի յանձնել էր մեզ։ Սակայն, շուտով, վախենալով անախորժ հետեւանքներից, աշխատեցինք ոչնչացնել «Տարերը»—ի այդ համարը։ Որքան դժում, «Նոր՝ Դար»—ի դէմ դրւած այդ ոտանաւորը Ռ. Պատկանեանի մահից յետոյ ոչնչացւած էր նրա կնոջ կողմից։ Ամբողջ ոտանաւորը լաւ չեմ յիշում, բայց հետեւեալ չորս տողը մնացել է մտքում։

… Սիրտը խա՞ է… պիտի փսխեմ . . .

Տակը շուտով լէկէն դըրէֆ . . .

Զէ՞, լէկէնը մեղք է, տրդա՞ֆ . . .

«Նոր՝ Դար»ը կայ . . . «Նոր՝ Դար» բերէֆ . . .

Ժամանակ առ ժամանակ, պատահական կերպով, մեր բարեկամների աշխացութեամբ, մեր ձեռքն էին ընկնում Պոլսի «Արևելք»ը եւ Մարսէլլի «Արմենիա»—ն, բայց այդ երկու տարրեր լրագիրներից համարեա ոչինչ չէինք կարող քաղել։

Այդ ժամանակները պատահեց շատ հասարակ մի դէպք, որը հետապայտում իր նշանակալից հետեւանքները պիտի ունենար իմ աշխարհայեացքի վրա։ Զեմ յիշում որի միջոցով՝ ձեռքս է ընկնում շատ բարակ թղթի վրա մանր եւ մաքուր տպագրւած ութ երեսանոց մի երկչարաթաթերթ, որը կրում էր մեզի համար բաւականին տարօրինակ «Հնչակ» անունը։ Ընկերներս եւ ես սկզբում անտարբեր, յետոյ մեծ հետաքրքրութեամբ կարդում էինք ամրող թերթը եւ ստանում էինք միեւնոյն տպաւորութիւնը։ Թերթը նման չէր «Մշակ»—ին, «Նոր՝ Դար»—ին եւ մեր ձեռքը բնկած միւս լրագիրներին՝ ո՛չ իր լեզով, ո՛չ բովանդակութեամբ, ո՛չ էլ համարձակութեամբ։ Թերթը իրեն «Հայ յեղափոխական կուսակցական «օրգան» էր անւանում, ինչ որ «սոցիալիզմի» եւ «աշխատաւոր դասակարգի» մասին էր խօսում, որոնց մասին մենք շատ քիչ բան դիտէինք. յարձակում էր «թիւրք եւ ոռու» «բիրտ բռնակարական» կառավարութիւնների վըրա, խօսում էր «Հայ ժողովրդի քաղաքական եւ տնտեսական տա-

ուսպանքների» մասին. եւ այս բոլորը այնպիսի չեշտով ու հաւատով, որ կարգացողը այն տպաւորութիւնն էր ստանում, թէ հէնց վալլը հայ յեղափոխութիւնը պիտի սկսվի: Պատրանեկան ու երիտասարդական հոգեբանութիւնը միշտ սիրել է ազգու, համարձակ մտքեր ու խօսքեր. ազգում էր եւ այն ընդդժած միտքը, որ այդ թերթը հրատարակող կուսակցութեան գործունէութիւնը «նոր դարագլուխ է բաց անում Հայոց պատմութեան մէջ», թէ մինչեւ «Հնչակ»-ը ամէն ինչ լոկ խօսքեր են եղած, թէ «խօսքերը արդէն կէս դարէ որ ասւած են, իսկ այժմ պէտք է դորձ, եւ դա շատ շուտ է լինելու»... Ու այս տեսակ ուրիշ մտքեր :

Թերթի վրա մինտրում ենք խմբագրի ու հրատարակչի անունը. ու չինչ չկայ: Տրւած է միայն ինչ որ Mr. Beniard անունը եւ Poste Restante, Genève: Բնականաբար, մեր «Տարերք»-ի խմբագրութիւնը իսկոյն սկսում է արտատպել «Հնչակ»-ից նիւթեր եւ քաղւածքներ անել զանազան յօդւածների համար: Հունձքը նոյն էր: Ի հարկէ, ոչ մի ակնարկ, որ նիւթերն ու յօդւածների ամփոփումը առնած է «Հնչակ»-ից: Մեր թերթում մինչեւ իսկ երեւում էին՝ «Մեղ գրում են Պոլսից» թղթակցութիւններ: Հայրս, որի ձեռքը մերթ ընդ մերթ ընկնում էին «Տարերք»-ի համարները, մի օր հեղինօրէն հարցըց ինձ. «Ձեր Պոլսի եւ Վանի թղթակցները Նախիջեւանի ո՞ր փողոցն են ապրում...»: Շատ տարիներ յետոյ, ես համոզւեցի, որ բոլոր ժամանակներում եւ բոլոր օրաթերթերը ունեցել են խմբագրի ապրած փողոցում «արտասահմանեան սեփական» թղթակցներ, որոնք ուղարկել են յօդւածներ փողոցի միւս ծայրից...:

Մեղ համար հարկաւոր էին «ազգային» նիւթեր, ուստի երեք ուռելի ուղարկեցի «Հնչակ»-ին եւ ինդրեցի ուղարկել թերթը, բայց զգուշութիւնից դրված (չէ՞ որ «Հնչակ»-ը գրում էր «սոցիալիզմի» մասին եւ յաճախ յարձակուում էր «ուսւ միապետական կարգերի դէմ»), ուժի ոչ թէ իմ անունը եւ հասցէն, այլ մէծ մօրս՝ Եղիսարէթ Սուլթան - Շահի, որ այդ ժամանակները թոյլ չէին տալիս ձերբակալել 70 տարիքը անցած քաղաքացուն: Փողի հետ «Հնչակ»-ին ուղարկեցի եւ մի «թղթակցութիւն Կովկասից», որի մէջ գրում էի, որ «մեր քաղաքում մեր երիտասարդութիւնը երդւած է իր անձը զոհ բերելու Հայաստանի պղատութեան. նա արդէն զինած է»: Պէտք է ասեմ, որ մեր քաղաքի տասը - քսան աղքասէր պատանիների մէջ ես միակն էի, որ ձեռք էի բերած մի «Բուլղոկ» ատրճանակ, որով, ինչպէս տես-

նում է ընթերցողը, իմ թղթակցութեան մէջ ևս «մի քիչ» չափազանցրել էի իրականութիւնը . . . :

Ու մի ամիս, չանցած՝ ստացւում է «Հնչակ»-ը, որի վերջին երեսի վրա, ներքեւը, տպւած էր«Ն. - Ն. ստացանք չնորհակալութեամբ Յ ու., ցաւում ենք, որ գաղտնապահութեան տեսակէտից անկարող ենք զետեղել ձեր շատ հետաքրքրական թղթակցութիւնը. սպասում ենք այլ յօդւածների»: Աւելորդ է ասելն էլ, որ ես հպարտութեամբ ցոյց էի տալիս «Հնչակ»-ի այդ համարը, մատիտով նշանակելով ինձ վերաբերեալ պատասխանը: Հպարտութեամբ մտածում էի, որ ես արդէն «կապեր» եմ հաստատել արտասահմանի յեղափոխական կուսակցութեան հետ:

Մենք չուտովլ իրացրինք «Հնչակ»-ի մէջ յաճախ գործածւող բառերն ու գաղափարները: Առաջ լսած էինք «կուսակցութիւն» բառը, թէեւ լսւ կարծիք չունէինք «կուսակցականների» մասին, որովհետեւ մեր չուրջը միշտ ասում էին թէ՝ «Հայքս միաբան չենք, որովհետեւ կուսակցութիւններ կան»: Այժմ, սակայն, մեզ թւում էր թէ՝ անհրաժեշտ էր կուսակցութիւնը, քանի որ նա խօսում էր «յեղափոխական կազմակերպութեան» մասին: Բայց ի՞նչպէս էին իրադրծում այդ վերջին երկու բառերը, մենք չդիտէինք, թէեւ այդ բառերի հըմայքը մեծ էր: Թէրթը խօսում էր ինչ որ «մօտաւոր ու հեռաւոր ծըսպագրի» մասին, այդ էլ մեզ շատ էր հետաքրքրում, թէեւ խիստ աղօտ կերպով էինք ըմբռնում այն ժամանակները ծրագրի անհրաժեշտութիւնը. «բաւական չէ՞ դէնքը», մտածում էինք մենք . . .

1890 թ. գարնան մենք գաղարեցրել էինք «Տարերք»-ը. նախ՝ մեր խմբակը ճեռքից ճեռք «Հնչակ» էր տարածում, ապա ժամանակ էլ չունէինք, քանի որ պատրաստում էինք աւարտման քննութիւնների, որ ասել է, թէ երկու ամսից եյտոյ՝ արդէն համալսարանի կամ այլ բարձրագոյն դպրոցի ուսանողներ էինք գտնալու: Բայց մեր քաղաքում եղած սովորութեան, ամենքս էլ Մոսկվա պիտի գնայինք ու այնտեղ 4 - 5 տարի բարձրագոյն կրթութիւն ստանայինք: Ես սաստիկ մտահոգւած էի մասնագիտութիւն ընտրելու հարցով: Մեր ընտանիքի մէջ ես հինգերորդն էի. իմ մեծ եղբայրները արդէն ուսանող էին՝ մէկը բժշկական, միւսը իրաւաբանական, երրորդը ճարտարապետական, չորրորդը լեզւաբանական ճիւղերում: Մայրս ուղում էր, որ ես էլ բժշկական բաժինն ընտրեմ, բայց հայրս եւ մօրեղբայրս (երկուսն էլ բժշկներ) հակառակում էին եւ ուղում էին որ ես ընտրեմ բնական գիտութիւններ եւ նւիրւեմ գիտական հարցերին: Ես պատրաստ էի ընդունել այդ ծրագիրը, բայց երազում էի, որ մտնեմ

ոչ թէ Մոսկվայի, այլ արտասահմանեան համալսարանի նոյն բաժինը։ Շուտով հայկական կեանքի քաղաքական դէպքերը հեշտացրին իմ երազած ծրագրի իրականացումը։

Յուլիսի կէսերին թիֆլիսի հայ լրագիրները, ասլա միաժամանակ ուսւա մայրաքաղաքներից ստացւած թէրթերը հեռագիրներով եւ յօդւածներով աւետում էին ուսւահայութեան, որ Յուլիսի 15-ին կիրակի առաւօտ, Կ. Պոլսի մէջ հայկական մեծ բողոք - ցոյց է եղել. հաղարի չափ հայ մշակներ, մտաւորականներ ու արհեստաւորներ, յեղափոխական երգերով ու դրօշակով, քաղաքական ազատութեան պահանջներ են ներկայացրել Բարձր Դրան։ Շատերը զէնք են ունեցել. ոստիկանութեան ու ամբոխի մէջ եղել են վիրաւորածներ եւ մինչեւ իսկ սպանւածներ : Այդ լուրը իր ժամանակին, անշուշտ, շատ հայաբնակ քաղաքներում, ինչպէս եւ Նախիջեւանում, ուժգին տպաւորութիւն թօղեց։ Հետեւեալ եւ միւս օրերի ոսւս լրագիրները սկսել էին անսանձ յարձակումներ թիւրք կառավարութեան «տմարդի քաղաքականութեան դէմ»։ Կիսապաշտօնական «Ս. Պետերբուրգակի վէդոմոսթի» օրաթերթը պարզօքն գրում էր, թէ՝ «Հասել է, վերջաղէս, ժամանակը, երբ ստրկութեան մէջ մնացած միակ քրիստոնեայ ժողովուրդն էլ թիւրքիայում իրաւունք ունենայ թօթափելու իր դարաւոր լուծը ու քրիստոնեայ կառավարութիւնները պէտք է լուրջ ուշաղբութիւն դարձնեն հայկական անարդարութեան վրա»։ Դժւար է յիսուն տարիներից յետոյ նկարագրել մեր քաղաքի ողեւորութիւնը, անվերջ սպամութիւնները, երազական ծրագիրները, Պոլսի ցոյցի չափազանցրած նշանակութիւնը։ Զեռքից ձեռք անցնում էին այդ առթիւ զրած Ռ. Պատկանեանի նամակները Կաթողիկոսին, այլեւ Պոլսի՝ Մ. Խրիմեանին, Արծրունուն եւ Ա. Յովհաննիսեանին։ Պոլսի ցոյցից առաջ, Կարինում եւս բողոք - ցոյց, ձերբակալութիւններ եւ սպանութիւններ էին եղած, եւ այդ օրերին նոյնպէս արտագրում ու իրար մէջ էին բաժանում Ռ. Պատկանեանի գրած ոտանաւորը, որը սկսում էր այսպէս.

... Կեցցե՞ն կարինի անկեալ քաջերը,
նոր Հայաստանի նոր նահատակներ ...

«Հնչակ»-ի «յեղափոխական կաղմակերպութիւնը» մեր աչքում մեծ նշանակութիւն ստացւ, որովհետեւ գուշակում էր, որ շատ շուտով հայ ժողովուրդը պիտի ապստամբի ու մենք էլ Պոլսի ցոյցը ընդունում էինք իրեւ Հայաստանի յեղափոխութեան սկիզբը, որին շատ շուտով պիտի յաջորդէր «Հայաստանի ընդհանուր ապստամբութիւնը»։ Մի քայլ եւս եւ հորիզոնի վրա արդէն նշմարում էր «Հա-

յաստանի ազատութիւնը»... Այդ հաւատը աւելի եւս ամրացաւ, երբ Պետքը ուրդի «Սէվկոնիյ Վէսպ-նիկ»-ի Պոլսի թղթակիցը գրում էր, «Պոլսի հազարաւոր զինւած հայութիւնը «Մեր Հայրենիք» ազգային երգով հրապարակ էր իջած. հայ յեղափոխութիւնը սկսւած է»:

Մի միտք ամբողջովին կլանել էր ինձ՝ գնալ անպատճառ արտասահման եւ այնտեղ համալսարաններից մէկում ուսանել: Ու այդ, ի հարկէ, պէտք է լինէր միայն Ժընեւի համալսարանը, որը ի դէպսունէր եւ հռչակաւոր դասախոսներ: Զգիտեմ ինչպէս էի բացատրել իմ ծրագիրը, բայց Հայրս համաձայնեց, որ, յիրաւի, Ժընեւը ամենայարմար խաղաղ վայրն է գիտութեամբ զբաղւելու համար, «մանաւանդ, աւելացնում էր զարմացած մօրս նայելով՝ Շվէյցարիայի կեանքը խստապահանջ է բարոյականութեան տեսակէտից, իսկ դա անհրաժեշտ է անփորձ պատանիի մը համար»:

Եւ ահա, 1890 թ. Յուլիսի 31-ին, ես ճանապարհ ընկայ գէպի Ժընեւ, որը իմ երեւակայութեան մէջ նոր Մեկկայի ոյժ էր ստացել: Ես շտապում էի տեղ հասնել. «Յեղափոխութիւնը սկսել էր, ո՞վ գիտէ՝ մինչեւ տեղ հասնելս գուցէ ընդհանուր ապստամբութիւնն էլ բոնկւէր...» :

Փարիզ

(Յարումակելի)

